«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գոյականի ուսուցման մեթոդիկան տարրական դասարաններում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Գայանե Տեր-Ղազարյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գ. Մահարու անվան հ.176 հիմն. դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3
ԳԼՈՒԽ 1 4
Գոյականը որպես խոսքի մաս 4
ԳԼՈՒԽ 2 7
Հատուկ և հասարակ գոյականներ 7
ԳԼՈՒԽ 3 11
Անձնանիշ և իրանիշ գոյականներ 11
ԳԼՈՒԽ 4 13
Գոյականի թիվը 13
ԳԼՈՒԽ 5 15
Գոյականի որոշյալ և անորոշ առումները 15
Եզրակացություն 18
Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

«Գոյականի ուսուցման մեթոդիկան տարրական դասարաններում» հետազոտական աշխատանքում համառոտ ներկայացված է «Գոյական անուն» թեմայի դասավանդման մեթոդիկան՝ ուսուցման նորագույն մեթոդներով, վարժություններով և հնարներով:

Ուսուցման նորագույն մեթոդներ կիրառելիս ուսուցչին հնարավորություն է ընձեռնվում տարաբնույթ հնարներով հասնել նպատակին՝ սովորողի կողմից նյութի յուրացմանը, իսկ սովորողին օգնում է ուսումնառության ընթացքում կարողանալ հստակ տարբերակել, անվանել, սահմանել գոյականի առանձնահատկությունները, ինչպես նաև գործնականում կիրառել:

Ուսուցչի նպատակի իրագործման ճանապարհին պատմելու, ցուցադրելու, թվարկելու միջոցով սովորողը ձեռք է բերում կայուն գիտելիքներ, հմտանում է՝ բացատրելով, մտաբերելով և հիմնավորելով յուրացրածը:

Խոսքի մասերի ուսուցմամբ զբաղվում է ձևաբանությունը, որի անվանումն արդեն հուշում է, որ նրա հիմնական գործառույթը բառերի ձևափոխությունների քննությունն է: Սովորողը արձանագրում է բառային ձևափոխությունները և անում համապատասխան հետևություններ: Թեմայի յուրացման ընթացքում ուսուցիչը սովորեցնում է աշակերտին նորագույն մեթոդների կիրառմամբ նպաստել հաղթահարելու, հիմնավորապես սովորելու և գործնական վարժությունների միջոցով ամրապնդելու նյութը:

Խոսքի մասերը, այդ թվում նաև գոյականը ուսուցանվում են ոչ միայն քերականական ձևավորման, այլև խոսքում կիրառվելու առանձնահատկությունների և ոճական նպատակադրության տեսակետից:

Գծագրերի, աղյուսակների, քարտային աշխատանքների և բազմազան մեթոդների, ինչպես նաև տեսաշարերի ցուցադրման կիրառությունը մեծապես նպաստում է սովորողների շրջանում նյութի ուսումնառության որակի բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 1

Գոյականը որպես խոսքի մաս

Գոյական անվանը աշակերտները ծանոթանում են 3-րդ դասարանից: Նրանք արդեն տարրական դասարանում ծանոթանում են անձ և իր ցույց տվող գոյականներին, հոգնակի թիվը կազմելու ձևերին և ուղղագրությանը, գոյականի ձևափոխություններին՝ առանց հոլովները նշելու և անվանելու: Ուստի առաջին դասը կարելի է սկսել զրույցի մեթոդով: Դասը սկսում ենք գոյական բառի բացատրությունից: Գոյական=գոյ+ական, այսինքն՝ գոյություն ունեցող: Ուրեմն գոյականը գոյություն ունեցող առարկան է:

Գոյականի մասին տեսանյութ դիտելուց հետո առաջարկել աշակերտներին, որ թվարկեն առարկաներ երկնային, ցամաքային և ջրային տիրույթների ոլորտից: Սրա համար կարելի է կիրառել «Մտագրոհ» մեթոդը:



Առաջարկել սովորողներին բնութագրել գոյականը այլ հատկանիշներով՝ պարզ, բաչդ, ածանցավոր, բարդածանցավոր:[1]

Այսուհետև ցուցադրում ենք հաջորդ պաստառը և դասարանի օգնությամբ լրացնում այունակները:



Այնուհետև պարզում ենք, որ գրված ու թվարկված բոլոր բառերը պատասխանում են ի՞նչ և ո՞վ հարցերին:

Սակայն սա բավարար պայման չէ ո՞վ և ի՞նչ հարցերին պատասխանող բառերը գոյական համարելու համար, որովհետև ես, դու, ոչ մեկը բառերը նույնպես պատասխանում են ո՞վ հարցին, սակայն գոյական չեն: Ուրեմն հարցերին պատասխանելը դեռ բավարար պայման չէ: Գոյություն ունենալու փաստը ևս բավարար պայման չէ, քանի որ յուրաքանչյուր մարդ, ես ասելով, բնականաբար չի կասկածում, որ ինքը գոյություն ունի:

Այնուհետև առաջադրում ենք հետևյալ հարցը.

[1] . Ավետիսյան Յ., Զաքարյան Հ., Հայոց լեզու, Ձևաբանություն

-Ի՞նչ եք կարծում, արդյոք գոյություն ունեցող բոլո՞ր առարկաներն ու երևույթները անվանում ունեն:

Ակնկալվող պատասխանը ո՛չ, տիեզերքում, ընդերքում, նույնիսկ ցամաքի վրա շարունակ բացահայտվում են նոր երևույթներ, հայտնաբերվում են նոր առարկաներ, որոնք անվանում են ստանում, սակայն դեռևս կան շատ-շատերը, որոնք գոյություն ունեն, սակայն հայտնաբերված չեն, ուստի և անվանում չունեն:

Սրան հաջորդող հարցն է.

-Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք անվանում ունեցող բոլոր առարկաներն ու երևույթները գոյություն ունեն. հիմնավորել կարծիքը (ակնկալվող պատասխան-այո՛, եթե անվանում ունեն, ուրեմն գոյական են, կապ չունի, այն անհետացա՞ծ են, գոյություն ունեն մեր մտապատկերներում, թե՞ կասկածի տակ է նրանց գոյության փաստը):

Զրույցը կարող է վերածվել բանավեճի, սակայն ստուգող հարցերով պետք է մոտեցնել խնդրի հասկացմանը:

Աշակերտների օգնությամբ հանգում ենք հետևյալ հետևության:

Պարզեցինք, որ գոյականը պատասխանում են ո՞վ և ի՞նչ հարցերին, սակայն սա բավարար չէր: Պարզեցինք, որ ընդհանուր հմուտ արտահայտող գոյականները խմբավորվում են (տե՛ս՝ գծապատկերներ): Այնուհետև արձանագրեցինք, որ անվանում ունեցող բոլոր առարկաները, երևույթները, հասկացությունները գոյականներ են: Ուրեմն՝ սահմանումը կարող են սովորողներն իրենք տալ: Կարևորվում է լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների առանձնահատկությունների դասակարգման կարողությունը:[2]

Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն կամ գոյական:

Քերականության մեջ առարկա ասելով՝ հասկանում ենք ոչ միայն նյութական իրերը, այլև անձեր, կենդանիներ, բնության երևույթներ, զգացմունքներ, եղելություններ, գաղափարներ: Բանավոր կատարում ենք ա և բ վարժությունները (էջ 17)՝ ստացած գիտելիքներն ամրապնդելու համար, ապա տրվում է տնային առաջադրանք (վարժ. գ (էջ 17)):

[2] . Թովմասյան Թ., Գրիգորյան Լ., Մայրենի, Մեթոդական ձեռնարկ

ԳԼՈՒԽ 2

Հատուկ և հասարակ գոյականներ

Այս թեմայի իմացությունը կարևոր է երկու առումով. նախ աշակերտները տեսականորեն ճանաչում ու տարբերակում են հասարակ ու հատուկ գոյականները:

Հանրակրթական պետական նոր չափորոշիչը կարևորում է.

1) լեզվական գիտելիքների փոխանցումը և ձևավորումը,

2) յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների ու կարողությունակությունների ձևավորումը:[3]

Եվ ապա այս նյութի լավ իմացությունը աշակերտներին հարկավոր է լինելու հետագա աշխատանքային գործունեության ընթացքում, քանի որ հատուկ անունների գրության կանոնների իմացությունը ունի խիստ գործնական նշանակություն և կիրառություն:

Անհրաժեշտ է աշակերտներին հասկացնել, որ հասարակ անունը տեսակի անուն է, իսկ հատուկը՝ այդ տեսակի առարկաներից որևէ մեկի: Օրինակ՝ մարդ-ը տեսակի անուն է, իսկ Նարեկ-ը այդ տեսակից մեկի անունը, գետ-ը տեսակի անուն է, իսկ Հրազդան-ը այդ տեսակից մեկի անունը, քաղաքը բնակավայրի տեսակի անուն է, իսկ Երևանը այդ տեսակից մեկի անունը: Այսպիսով՝ մարդ, գետ, քաղաք անունները հասարակ են, իսկ Նարեկ, Հրազդան, Երևան անունները՝ հատուկ: Գրատախտակին և տետրերում գրել ենք տալիս առարկաների անունների երկու շարք՝ հասարակ և սրան համապատասխան հատուկ անուններ: Այսպես՝

մարդ- Մասիս, Արամ, Տիգրան, Դավիթ, Չարենց, Թումանյան և այլն:

բնակավայր- Երևան, Հայաստան, Իտալիա, Արցախ, Ֆրանսիա և այլն:

գետ-Հրազդան, Վոլգա, Արփա, Կարկառ և այլն:

ծով, լիճ, օվկիանոս- Կարմիր ծով, Սև ծով, Սևանա լիճ, Ատլանտյան օվկիանոս և այլն:

հիմնարկություն- «Անի» հյուրանոց, «Փարվանա» ռեստորան, «Նաիրիտ» գործարան և այլն:

Այս շարքերը կազմելուց հետո դժվար չէ որոշել, որ շարքերի առաջին անունները, ավելի ճիշտ անվանումները կոչվում են հասարակ, իսկ մյուսները՝հատուկ: Այնուհետև

[3] ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

դիտում ենք տեսանյութը՝ Սոնա Միսկարյանի հեղինակությամբ (տե՛ս տեսանյութը)՝ թեմայի ամփոփման նպատակով:

Միջառարկայական կապն ապահովելու նպատակով որպես տնային առաջադրանք հանձնարարում ենք կատարել:

Բոլոր բաղադրիչները սկսվում են մեծատառով: Բացատրվում են այդ դեպքերը՝ ներկայացնելով աղյուսակով, աշակերտները շարունակում են լրացնել 2-րդ սյունակը:

№	**Խմբերի անվանումները**	**Օրինակներ**
1	Պետությունների պաշտոն. անուններում	Հայաստանի Հանրապետություն
2	Բաղադրյալ անձնանուն, մականուն	Հրանտ Մաթևոսյան, Աշոտ Երկաթ, Նահապետ
3	Բոլոր բաղադրյալ աշխարհագր. անուններ ա)որոնց մեջ բաղադրիչներն առանձին հատուկ անուն են	Արփա Սևան, Դոնի Ռոստով
	բ) հասարակ անուն լրացումը նախադաս է	Մեծ Հայք, Հին Հունաստան
	գ) երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը նաև հատուկ), փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ	Հեռավոր Արևելք, Խոր Վիրապ, Մեծ
4	Հոգևոր-պատմամշակութային հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են	Անգղա Սուրբ Նշան, Մաստարայի Սուրբ Հովհաննես

Հաջորդ դասաժամին ուսուցանվում են այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառ: Բացատրում ենք այդ դեպքերը՝ կրկին աղյուսակով ներկայացնելով, քանի որ ավելի է տպավորվում հաղորդածը:

№	**Խմբերի անվանումները**	**Օրինակներ**
1	Աշխարհագրական անումներ, որոնց երկրորդ բաղադրիչներն **ծով, լեռ, սար, նեղուց, գավառ, օվկիանոս,կղզի, թերակղզի, բարձրավանդակ** բառերը	Սև ծով, Բալկանյան թերակղզի, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս…… (շարունակել աշակերտների օգնությամբ)

2	**Չակերտների** մեջ գրվող անվանումներ	«Առավոտ» օրաթերթ
3	Օտար անուններ, որոնց մեջտեղում ունեն **դա, դե, վան,** **դը** մասնիկներ	Օնորե դը Բալզակ, Գի դը Մոպասան……..
4	Հիմնարկների, կուսակցությունների, պատմամշակութային տեղանունների անվանումներ	Կրթության ազգային ինստիտուտ, Ամբերդ ամրոց
5	Մրցանակների, կոչումների, շքանշանների անվանումներ	«Մարտական խաչ» շքանշան, Ազգային հերոս կոչում
6	Մարդկանց կողմից ստեղծված իրավական կառույցների, պետական տարբեր ինների անվանումներ	Երևանի պետական համալսարան……
7	Նշանավոր արձությունների և պետական տոների ունումներ	Նոր տարի, Մարտի ութ

Անհրաժեշտության դեպքում ցուցադրել տեսանյութ:

Ապա աշակերտների ուշադրությունը սևեռել հետևյալ բառերի ճիշտ գրությանը:

Օտար հատուկ անունների կազմում **դը, դա, վան, ալ** և այլ բաղադրիչներ փոքրատառով են գրվում՝ որպես քերականական մասնիկներ՝ հոդեր, նախդիրներ:[4]

Լեոնարդո դա **Վ**ինչի, բայց **Դ**ա **Վ**ինչի

Վինսեթ վան **Գ**ոգ, բայց **Վ**ան **Գ**ոգ

նաև՝ **Հ**այկ **Ն**ահապետ, բայց՝ **Ն**ոյ նահապետ

Ամրապնդելու համար կատարել դասագրքի վարժ. Ա (էջ 21):

Տնային առաջադրանք: Անհատական (4 աշ.)

ա) Գրել տեղեկություններ հետևյալ տոների մասին՝ Բարեկենդան, Զրօրհնեք, Տնօրհնենք, Վարդավառ:

բոլորին- Վարժ. Բ (էջ 21):

[4] . Ավետիսյան Յ., Զաքարյան Հ., Հայոց լեզու, Ձևաբանություն

Թեմայի ամրապնդման համար առաջարկվում է հանձնարել քարտային աշխատանք, որը կարելի է կազմակերպել և՛ անահատական, և՛ խմբային տարբերակով։։

Քարտեր

№1

Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով։

1) Վերին Արտաշատ, Հռոմեական Կայսրություն, Դժոխք Հրայր
2) Արևմտյան Ասիա, Տիգրան Մեծ, Էջմիածնի Մատենադարան
3) Լեռնային Ղարաբաղ, Համաշխարհային Բանկ, Հայկական Տավրոս
4) Մխիթար Հերացի, Նոր Արաբկիր, Մերձավոր Արևելք

.....

№2

Ո՞ր շարքի հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով։

1) Գրիգոր Լուսավորիչ, Պարսից Ծոց, Արևելյան Տավրոս
2) Բյուզանդիայի Կայսրություն, Մեծ Մասիս, Նոր Խարբերդ
3) Դաշտային Կիլիկիա, Աշոտ Գ Ողորմած, Դավիթ Անհաղթ
4) Ժաննա Դը Արկ, Առաջավոր Ասիա, Ներքին Թալին

……..

Քարտ 1

Արտագրել՝ մեծատառերը թողնելով միայն անհրաժեշտ դեպքերում։

ա/ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐՆ ԵՆ ՍԱՆԱՍԱՐՆ ՈՒ ԲԱՂԴԱՍԱՐԸ, ՄԵԾ ՄՀԵՐԸ, ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ ԵՎ ՓՈՔՐ ՄՀԵՐԸ։

բ/ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐՆ ԷԻՆ ԱՐԱՄԱԶԴԸ, ԱՆԱՀԻՏԸ, ՎԱՀԱԳՆԸ, ԱՍՏՂԻԿԸ, ՎԱՆԱՏՈՒՐԸ։

ԳԼՈՒԽ 3 .

Անձնանիշ և իրանիշ գոյականներ

Տարրական դասարանում աշակերտներն արդեն ծանոթ են անձ և իր ցույց տվող գոյականներին: T-աձև աղյուսակով գրատախտակին աշակերտների օգնությամբ գրում ենք անձ և իր ցույց տվող գոյականներ և նշում տարբերությունները:

անձ	իր
ուսուցիչ	դպրոց
աշակերտ	գիրք
մայր	դասարան
ծնող	քանոն
երեխա	հաց

Ապա առաջարկում ենք հարց տալ այդ գոյականներին և ըստ հարցի էլ հիմնավորել դասակարգումը:

Ուրեմն՝ <u>ո՞վ</u> հարցին պատասխանող բառերը կոչվում են անձնանիշ, իսկ <u>ի՞նչ</u> հարցին պատասխանողները՝ իրանիշ:

Անձ բառը բացատրում ենք հետևյալ ձևակերպումով.

ա) անձ-մարդ, խոսելու ընդունակ

բ) իր- առարկա, իր, խոսել չկարողացող

Առաջարկում ենք հարց տալ կենդանիներին ու թռչուններին.

-Ի՞նչ:

Ավելացնում ենք, որ այդպես է ընդունված միայն նրա համար, որ մարդն առանձնանա բնության մյուս էակներից:

Միայն մարդ արարածին է տրվում ո՞վ հարցը:

Գեղարվեստական գրականության մեջ իր ցույց տվող բառերը (ծառը, ծաղիկը, քարը) նույնպես կարող են ստանալ ո՞վ հարցը, եթե դրանց վերագրվում է մարդկային հատկանիշներ: Այդ միջոցը կոչվում է անձնավորում: Ամեն ինչ կարող է մարդկային կերպարանք ստանալ, բայց այդ ամենը հնարավոր է միայն գրականության մեջ և մարդկային խոսքում, իրականում դրանք առանձին՝ որպես բառեր, շարունակում են պատասխանել ի՞նչ հարցին:

Առաջադրանք՝

Դասակարգել տրված բառերը՝ ըստ տրված խմբերի և անձնանիշ գոյականները ընդգծել:

Սկուտեղ, բուժակ, սկիհ, սաղավարտ, եպիսկոպոս, քերիչ, տեգ, խառատ, հարիչ, տավիղ, բրիչ, վարդապետ, տապակ, աշտանակ, հնէաբան, բրուտ, որմնադիր, կաթսա, ջուլհակ, սվին, կաթողիկոս

1. Խոհանոցային պարագաներ _____
2. Պատմաբառեր_____
3. Գործիքներ_____
4. Մասնագետներ_____
5. Հայոց եկեղեցու սպասավորներ_____

Այնուհետև ցույց ենք տալիս առարկաների և մասնագիտությունների նկարներ և հանձնարարում աշակերտներին անվանել դրանք. (ձախից՝ շաղափ, մուրճ, հարթաշուրթ, գայլիկոն,կիթառ, ակորդեոն,թմբուկ,դհոլ, թառ, բժիշկ, փոստատար, ուսուցիչ, վարորդ, խոհարար, վաճառող, շինարար, վարսավիր, հրշեջ, գորգագործ, կավագործ):

ԳԼՈՒԽ 4

Գոյականի թիվը

Դասը սկսում եմ զրույցով: Ցույց եմ տալիս դասարանի աշակերտներից մեկին և պահանջում ասել, թե քանի առարկա է մատնանշում աշակերտ բառը: Իսկ բոլոր աշակերտներին մատնանշելով, պատասխանում են մեկից ավելի: Եվ քանի նրանք արդեն տարրական դասարանից ծանոթ են գոյականի թվին, ապա հիշեցնում եմ, որ բոլոր բառերն իրենց մեջ արդեն ունեն թվի գաղափար: Ուրեմն՝ ըստ առարկաների ցույց տված քանակի՝ գոյականները ունեն երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Աշակերտների միջոցով պարզում եմ, որ եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա, արտահայտում է մեկի գաղափար և իր իմաստի արտահայտման համար չունի հատուկ ձև: Բառի ուղիղ ձևը հենց եզակի թիվ է ցույց տալիս:

Երբ նույն առարկան(տվյալ դեպքում դասարանի բոլոր աշակերտները)մեկից ավելի է, այսինքն՝ գործածվում է հոգնակի թվով , ստանում է հատուկ վերջավորություն: Ապա առաջարկում եմ կազմել տրված գոյականների հոգնակին.

տուն
ծառ
սար

եր

սեղան
դպրոց
ծաղիկ

ներ

Հոգնակիի կազմության այլ ձևեր

-իկ

մարդիկ

-այք

կանայք, տիկնայք, պարոնայք

-ք (հնացած)

Գյուղացիք

վանեցիք

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել՝

ա)**անձ** բառին, որի հոգնակին կազմվում է երկու ձևով՝ **անձեր և անձիք,**

բ) **ռուս** բառին, որը հոգնակիում **-ներ** է ստանում այն պատճառով, որ այն հայերենի բարբառներում արտասանվել է և այժմ էլ արտասանվում է որպես երկվանկ բառ՝ ըռուս, ուռուս:[5]

Քարտեր

---

1. Տրված բառերով կազմել բարդ գոյականներ և կիրառել նախադասության մեջ հոգնակի թվով:

   Բեռ, մուկ, փոս, սեր, եղբայր, մատյան, աման:

   ---

2. **Տուն, գործ, գիր, ձայն, ցույց, կեր** բառերից ստանալ նոր բառեր այնպես, որ մի դեպքում ստանան –եր, մյուս դեպքում՝ -ներ վերջավորությունները (օրինակ՝ առանձնատուն-առանձնատներ, մեծատուն-մեծատուններ):

---

3. Կազմել տրված բառերի հոգնակիները և հիմնավորել կանոններով:

   Գնորդ, ցնցող, վտանգ, սկյուռ, շտաբ, կայսր, թոռ, ռուս, կին, նախամարդ, բաղաձայն, վերնախավ, քաղաքապետ, դրոշմանիշ:

   ---

4. Տրված հատվածի ընդգծված գոյականները դարձնել հոգնակի և տեքստում կատարել դրանից բխող իմաստային և քերականական փոփոխություններ:

   Հետո *տղան* այլև չերևաց: Կամացուկ մոտենալով *խաչքարին* և մարդկանց *խոսակցությունը* լսելով՝ նախմացավ, որ Վանյան մեկնել է հեռավոր հյուսիս:

   Նա մեծ *առագաստանավով* կտրեց *ծով* ու *օվկիանոս*, և Անյան հետևեց նրան:

[5] . https://www.youtube.com/watch?v=59Y2vCuAaVs

5. Տրված բառերը դարձնել հոգնակի և բացատրել:

փարավոն-	սպի-
անձ-	վերնատուն-
հույն-	մեծատուն-
դիմանկար-	լրագիր-
մարզպետ-	վիպագիր-
խորհրդանիշ-	սկյուռ

Առաջադրանքները կբաժանվեն ըստ աշակերտների մակարդակների:

ԳԼՈՒԽ 5

Գոյականի որոշյալ և անորոշ առումները

Գրատախտակը բաժանել երկու մասի՝ մի սյունակում գրում ենք որոշյալ գոյականներ, մյուսում՝ անորոշ: Այնուհետև անցնում ենք այդ երկու մասերում գրված բառերի ուսումնասիրությանը, թե ինչ տարբերություն կա ը և ն հոդերով և առանց դրանց գրված բառերի միջև: Այնուհետև դիտում ենք տեսանյութ (Գոյականի որոշյալ և անորոշ առումները):[6]

Այնուհետև ամփոփում ենք թեման, ապա կատարում վարժություններ խմբերով:

1-ին խումբ

ա) Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառ_ եմ սիրում:

բ) Տատ_ ասաց, որ իր ծնողներ_ էլ են այդպես վարվել:

Եզրակացություն:

[6] https://www.youtube.com/watch?v=bCyPGu52ws4

Ը, ն- երբ հաջորդում է ձայնավոր

Ն-երբ հաջորդողը օժանդակ բայ է կամ էլ շաղկապը

2-րդ խումբ

ա) Քո այգի_ ծաղկել է:

բ) Այդ կոզի_ ես չգտա քարտեզի վրա:

ն- երբ տվյալ բառը վերջանում է ձայնավորով

3-րդ խումբ

ա) Մարիամ_ սպասում էր ընկերուհուն:

բ) Պարապմունքներ_ սկսվեցին ճիշտ ժամանակին:

ը, ն- սկ, սպ, զգ, շտ տառակապակցություններից առաջ

Աշակերտների միջոցով ուսումնասիրում ենք այլ դեպքեր և փորձում օրինաչափություններ գտնել.

1-ին խումբ

ա)Գարուն- եկավ վարդերով:

բ) Արև- որոշեց հանգստանալ:

ը- ե, ո-ից առաջ, որովհետև արտասանվում է յէ, վo

2-րդ խումբ

ա) Ծառ- ցավից տնքում էր:

բ) Մեղք_ խոստովանելն ամոթ չէ:

ը-երբ հաջորդում է բաղաձայն

3-րդ խումբ

ա) Մենք սիրում ենք այդ երգեր-:

բ) Նրանք ավարտեցին իրենց գործեր-, և ներկաները նկատեցին դա:

ը- երբ հաջորդում է վերջակետ, ստորակետ, միջակետ կամ բութ:

Այնուհետև խմբերին տրվում են օրինակներ, և աշակերտները պիտի գտնեն որոշյալ առումով գործածված բառերը, նշեն սխալ գործածված դեպքերը և բացատրեն կանոնները:

Եզրակացություն

Հանրակրթական դպրոցի տարրական դասարանների մայրենի լեզվի գործող ծրագրերը մեծ տեղ են հատկացնում խոսք կառուցելու կարողություններ և հմտություններ մշակելու ուղղությամբ տարվող աշխատանքներին: Ուսուցման տեսակետից դժվարություն ներկայացնող որոշ խնդիրներ են ծագում գոյականի հոգնակի թվի կազմության, հատուկ և հասարակ գոյականների ուղղագրության, որոշյալ և անորոշ առումների գործածության, ինչպես նաև դասավանդման հարցերում: Գոյականի դասավանդման ընթացքում տարրական դպրոցի սովորողները զարգացնում են իրենց տեսական և գործնական հմտությունները, հատկապես՝ ուսուցչի կողմից գործնական աշխատանքների՝ աղյուսակների, գծագրերի, տեսանյութերի միջոցով:

Այսինքն, սույն աշխատանքի առանցքը կազմում են այդ հնարավորությունների իրականացման համար երաշխավորվող ուղիները, որոնք տրվում են մեթոդական համակարգի միջոցով.

1. Քարտային աշխատանքներ
2. Աղյուսակներ
3. Խմբային աշխատանքներ
4. Անհատական առաջադրանքներ
5. Ընտրովի և կարճ պատասխաններով առաջադրանքներ
6. Սահիկաշար:

Գրավոր և բանավոր աշխատանքների միջոցով 2 նպատակ է իրականացվում.

ա/ Գոյական թեմայիյուրացման ստուգում և գնահատում

բ/ խոսք կառուցելու հմտությունների կատարելագործում:

Այսպիսով, տարրական դասարնների սովորողները նյութի ուսումնասիրության ընթացքում սովորում են բնագրում ճանաչել, դասակարգել, տարբերակել գոյականները՝ ըստ առանձնահատկությունների:

Հետևյալ օրինաչափություններով ուսուցման համակարգի կարևորագույն խնդիրներից մեկը բանավոր և գրավոր խոսքում գոյականի ճիշտ կիրառության հմտացումն է սովորողների մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Յ., Զաքարյան Հ., Հայոց լեզու, Զնաբանություն, Երևան, Զանգակ, 2015
2. Բարսեղյան Հովհ., Մեյթիխանյան Փ., «Հայոց լեզու 7», Երևան, 2019
3. Գյուրջինյան Դ., Հայերենի բառակազմական բառարան, Երևան, Էդիթ Պրինտ, 2021
4. Թովմասյան Թ., Գրիգորյան Լ., Մայրենի, Մեթոդական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ, 2018
5. Հայոց լեզվի, գրականության առարկայական ծրագրեր և չափորոշիչներ
6. Մկրտչյան Գ., Թովմասյան Թ., Հայոց լեզու, 7-րդ դասարան» մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2015
7. Մկրտչյան Գ., Թովմասյան Թ., Գրիգորյան Լ., Հայոց լեզվի գործնական առաջադրանքների ժողովածու, Երևան, 2011
8. https://www.youtube.com/watch?v=bCyPGu52ws4
9. https://www.youtube.com/watch?v=59Y2vCuAaVs